արքայութեան գալուստը արագացնել։ — Հետաքրքրական են այն տեղեկութիւնները, որ Լոնդոնի եկեղեցական դրութեան մասին այս ժողովում տրուեցան։ Այդ աշխարհաքաղաքը իւր 4 միլիոն բնակիչներով միակերպ չէ բաժանուած եկեղեցիների վերայ. մինչդեռ Սիտի քաղաքարաժինը (կենտրոնում) 57 եկեղեցի ունի, որով 400 հոգուն մի եկեղեցի է ընկնում, արևմտեան կողմում եկեղեցիներ կան, որ 10—30 հազար հոգի ծուխ ունին, 4000 հոգի միջին թուով իւրաքանչիւր հոգևորականի համար։ Պէտք է սակայն ի նկատի ունենալ, որ առաջ աւելի վատ է եղել. վերջին 2 տասնեակ տարիներում, միայն հար. Լոնդոնում 80 նոր եկեղեցիներ են շինուել։

ՄԱՅՐ ԱԹՈՌ.

Ազգիս Վեհ. Հայրապետի ս. Օծման վեցերորդ տարեդարձը տօնուեցաւ այս տարի հս սեպտ. 26-ին պատշաճ հանդիսաւորութեամբ։ Առաւօտեան ժամերգութեան ներկայ էր Նորին Վեհափառութիւնը. վերջում Հայրապետական մաղթանք կատարուեցաւ և միաբանութիւնն ու Ճեմարանի աշակերտները համբուրեցին Սրբազնագոյն Տօնատիրոջ աջը։ Պատարագիչ եղաւ Բեսարաբիոյ թեմի նոր առաջնորդ Գեր. Ներսէս արքեպիսկոպոս։ Ապա տեղի ունեցաւ մի փոքրիկ գրական հանդէս Գէորգեան Ճեմարանի հանդիսարանում, ուր ներկայ էր Ս Էջմիածնի միաբանութիւնը. հրաւիրուած էին նաև սակաւաթիւ հիւրեր, որոնք հեռաւոր քաղաքներից եկել էին տօնի առթիւ։

Հանդէսը սկսաւ շարականով. Ա. լսարանի մի ուսանող կարդաց մի բաւական ընդարձակ տեսութիւն Վեհ. Հայրապետի «Պապիկ և թոռնիկ» աշխատութեան վերայ. Տեսուչ Տ. Կարապետ վարդապետ մի ընդհանուր և համառօտ ակնարկ ձգեց Հայոց Հայրապետութեան պատմութեան վերայ։ Հանդէսը փակեց Արժ. Գարեգին վարդ. Յովսեփեան, տօնի նշանակութիւնը բացատրելով։

Հանդէսից յետոյ Վանքի սեղանատան հանդիսաւոր ճաշ տրուեցաւ, որի միջոցին Վեհ. Հայրապետի, ս. Էջմիածնի միաբանութեան և կենաց բաժակներ առաջարկուեցան. խօսեցին Արժ. Սիոն վրդ., Բենիկ վրդ., և էլն։

Երեկոյեան ճրագալոյց կար թէ Վանքի և թէ Ճեմարանի բակում, ուր մեծ բազմութիւն էր ժողովուած զրօսնելու։

Հոկտ. 2-ին Վեհ. Հայրապետը բարեհաճեց այցելել Սաղմոսավանք, տեսնելու համար նորոգութիւնները՝ որ վերջացած էին, և 6-ին վերադարձաւ ս. Էջմիածին։

Սինոդի հրամանով Բարձր. Եղիշէ և Կորիւն վարդապետները գնացին Դարալագեազ՝ ս. Խաչ վանքի տօնին նուիրարերութեանց վերայ հսկելու և վերադարձան նախորդ տարիներից աւելի արդիւնք բերելով։

Տօների առթիւ մի քանի օրով Մայր Աթոռ հիւր եկան և մեկնեցան Գեր. Մեսրոպ արքեպիսկ., Արժ. Բենիկ վարդ. նորընտիր տեսուչ Երևանի թեմ. գպրանոցին, Արժ. Տիրայր վրդ. տեսուչ Շուշուայ թեմ. գպրանոցին, Արժ. Սիոն վրդ. փոխանորդ Հին Նախիջևանի և էլն։

Գեր. Ներսէս արքեպ. Խուդավերդեան, որ նշանակուել էր Բեսարաբիոյ թեմի առաջնորդ, հոկտ. 3-ին մեկնեց Երևանից դէպի իւր նոր պաշտօնատեղին։ Ն. Բ. Սրբազնութեան բարի երթ մաղթելու համար Երևան էին գնացել միաբանակից եղբայրներից շատերը, որոնք Երևանի պատուաւոր հասարակութեան բազմաթիւ ներկայացուցիչների հետ ճանապարհ դրին մինչև քաղաքի ծայրը (մասնակցելով պ. Եղիազարեանի այգում ի պատիւ Սրբազանի տրուած նախաճաշին), ուստեղ մինչև Քանաքեռ գիւղ։ Սրբազանը ողջամբ հասել է իւր նոր պաշտօնատեղին և պատշաճաւոր ընդունելութիւն գտել։

Գեր. Սուքիաս արքեպ. Պարզեանց՝ նորընտիր հայրապետական փոխանորդ Երևանի թեմին, հոկտ. 31 ին գնաց իւր պաշտօնատեղին։ Մի խումբ միաբանակիցներ մինչև Երևան ուղեկցեցին Նորին Բ. Սրբազնութեան։ Սրբազանը նոյեմբ. 4-ին ուղևորուել է Հին

Նախիջևան՝ այնտեղի նորակառոյց եկեղեցին օծելու համար։

Տփխիսի ս. Սարգիս վանքի վանահայր Թադէոս վրդ. յետ կոչուելով՝ նրա տեղ վանահայր և Կոնսիստորիայի աւագ անդամ կարգուեցաւ Արժ. Մխիթար վրդ. Տ. Մկրտչեան՝ որ դէպի իւր պաշտօնատեղին մեկնեց հոկտ. 30-ին։

Արժ. Գրիգորիս վրդ.՝ Նուխուոյ փոխանորդը՝ Մայր Աթոռս ժամանեց հոկտ. 26-ին Սրբալոյս Միւռոն տանելու նպատակով։

Արժ. Ղազարէ վրդ. Մուրադեան՝ Կարսի փոխանորդը՝ որ սեպտ. 23-ին Մայր Աթոռս էր եկել վիճակային ինչ ինչ գործերի մասին զեկուցումն ներկայացնելու՝ դէպի իւր պաշտօնատեղին մեկնեց հոկտ. 28-ին։

Արժ. Կիւրեղ վրդ. նշանակուելով Ախալցխայի փոխանորդ՝ նոյեմբ. 1-ին ուղևորուեց դէպի իւր պաշտօնատեղին։ Նախկին փոխանորդ Տ. Պետրոս վրդ. յետ է կանչուած։

Ղոր վիրապի վանքին ժամանակաւորապէս վանահայր կարգուած Տ. Թադէոս արեղայ կոչուելով Մայր Աթոռ՝ նրա տեղ վանահայր նշանակուեցաւ Գանձասարայ վանքի վանահայր Արժ. Անտոն վրդ. որ նոյեմ. 8-ին մեկնեց իւր պաշտօնատեղին։

Մայր Աթոռի միաբան Արժ. Արսէն վրդ. Ղլաճեան՝ որ կոկորդի հիւանդութիւնը դարմանելու համար գնացել էր Թիֆլիս՝ ս. Էջմիածին վերադարձաւ։

Վեհ. Հայրապետի բարեհաճ հրամանի համաձայն Նորին Սրբութեան դիւանապետ Բարձր. Տ. Կորիւն վրդ. հոկտ. 28-ին ուղևորուելով Գառնոյ գաւառ՝ հոկտ. 31-ին և նոյեմբ. 1-ին օծեց երկու նորակառոյց եկեղեցիներ՝ մին Դուին գիւղում ս. Մեսրոպ թարգմանչի անունով և միւսը Դարղալու գիւղում ս. Սահակ Պարթևի անունով։ Հայր սուրբը նոյեմբ. 2-ին վերադարձաւ ս. Էջմիածին։

Շուշուայ Կոնսիստորիայի նախանդամ Արժ. Մատթէոս վրդ. Նորին Վեհափառութեան հրամանաւ կանչուեցաւ ս. Էջմիածին։

Նորին Ս. Օծութեան բարեհաճ կարգադրութեամբ Արժ. Թովմա վրդ. նշանակուեց Մարցայ կալուածների կառավարիչ։

Իրենց առողջութիւնը դարմանելու համար Մայր Աթոռից ժամանակաւորապէս բացակայելուց յետոյ վերադարձան՝ Գեր. Անանիա եպս. սեպտ. 18-ին, Սլնոցի անդամ Գեր. Նսայի արքեպս. հոկտ. 5-ին, Շնորհ. Դպիր Գալուստ Տ. Մկրտչեան սեպտ. 23-ին։

---

† Վերջի պահուն Պոլսոյ Ամեն. Ս. Պատրիարքի առ Ն. Ս. Օծութիւն ուղղած մի հեռագրից իմացանք՝ որ Պոլսոյ նախորդ Պատրիարք Տ. Խորէն արքեպիսկոպոս Աշրգեան հոկտ. 26-ին վախճանուել է և մեծ հանդիսով թաղուել է 27-ին։

Տ. ՍԱՐԳԻՍ ԱՐՔԵՊ. ՏԷՐ ԳԱՍՊԱՐԵԱՆ

Սինոդի նախանդամ Գեր. Սարգիս արքեպիսկոպոս Տէր Գասպարեան՝ որ վեց ամսից ի վեր տառապում էր ծանր հիւանդութեամբ՝ սեպտ. 3-ին հանգեաւ ի Տէր իւր հայրենի Ղարաբուլաղ գիւղում (Արարատ)՝ ուր առանձնացած էր վերջերս։

Սրբազանի մահուան գոյժն երբ հասաւ ս. Էջմիածին՝ Նորին Վեհափառութեան յատուկ կարգադրութեամբ Արարատ գնացին Սինոդի աւագ անդամ Գեր. Արիստակէս արքեպիսկոպոս Դաւթեան, Լուսարարապետ Գեր. Մակար եպս., Բարձր. Ղևոնդ և Դարեգին վար-